

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-ԻՆ
ԺԱՍՆԸ 17:00-ԻՆ ԿԱՅԱՅԱԾ՝ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Ա. Ասատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Հ. Դարբինյան	ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Հ. Հունանյան	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Հ. Բերբերյան	ՀՀ վարչապետի օգնական, մամլո քարտուղար
Ա. Մինասյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի վարչության պետ

1. ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման կատարման մասին ընթացիկ հաշվետվություն

(Ա. Ասատրյան, Տ. Սարգսյան)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանը, զեկուցելով ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման կատարման հաշվետվությունը, ամփոփ տվյալներով ներկայացրեց հետևյալը՝

1) ՀՀ-ում 52 ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնների ստեղծման համար համապատասխան տարածքներ են հատկացվել 32-ի մասով և 27-ի մասով ընթացքի մեջ են գտնվում շինարարական վերանորոգման աշխատանքները: Մասնավորապես՝

ա. ավարտված են 6 ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնի շինարարական վերանորոգման աշխատանքները,

բ. ընթացքի մեջ են ևս 9 ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնի շինվերանորոգման աշխատանքները,

գ. 9 ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնի համար իրականացվում են նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները,

դ. 3 ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնի շինարարական վերանորոգման աշխատանքների կատարման համար հայտարարվել է մրցույթ.

2) դեռևս առկա են խնդիրներ՝ 20 ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնների ներդրման մասով, որոնք նախատեսվում է իրականացնել ծրագրի 2-րդ փուլի ընթացքում (փորձնական ծրագրի և կատարվող աշխատանքների արդյունքների ամփոփումից հետո).

3) ներկայումս ընթացքի մեջ է գտնվում ՀՀ Արարատի մարզի Մասիս, Վեդի և Արտաշատ քաղաքներում իրականացվող փորձնական ծրագրի շրջանակներում իրականացվող ուսուցման գործընթացը: Դրանից բացի՝ ավարտված են շինարարական վերանորոգման աշխատանքները (բացառությամբ Արտաշատ քաղաքի ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնի) և իրականացվում է գույքի, տեխնիկայի համալրում, տեղեկատվության փոխանակման համակարգերի փորձարկում: Փորձնական ծրագրի ամբողջական կատարման նպատակով անհրաժեշտ է նաև գործարկել ներքին ջեռուցման համակարգերը: Տվյալ հարցը քննարկվել է ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանի հետ և ձեռք է բերվել համաձայնություն: Այդ կապակցությամբ առաջարկեց ՀՀ կառավարության որոշմամբ կատարել համապատասխան վերաբաշխում՝ շուրջ 20.0 մլն դրամի սահմաններում.

Այնուհետև նա տեղեկացրեց, որ 2013 թվականի փետրվար ամսին, ըստ հետևյալ հերթականության, շահագործման կհանձնվեն Մասիսի, Արարատի, Վեդու, Աշոցքի, Չարենցավանի և Եղվարդի ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնները:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանի հաղորդումն այն մասին, որ 2013 թվականի փետրվար ամսին, ըստ հետևյալ հերթականության, շահագործման կհանձնվեն Մասիսի, Արարատի, Վեդու, Աշոցքի, Չարենցավանի և Եղվարդի ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնները.

2) հանձնարարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանին՝ առաջիկա ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնել բյուջեի վերաբաշխման մասին առաջարկություն՝ փորձնական ծրագրի շրջանակներում կառուցված ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնների ներքին ջեռուցման համակարգերի գործարկման համար գումար հատկացնելու վերաբերյալ:

2. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից իրականացվող վերապատրաստումների (դասընթացների) գծով առաջարկվող մոդելի՝ տեղական ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի գաղափարախոսության ներքո ներկայացում

(Ա. Պետրոսյան, Տ. Սարգսյան)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանը նշեց, որ առաջարկվող մոդելի իրականացման նպատակով առաջարկվում է զբաղվածության ակտիվ ծրագրերում, մասնավորապես, մասնագիտական ուսուցման կազմակերպման ծրագրում աշխատանք փնտոդ անձանց ընդգրկման առաջնահերթությունների սահմանման հիմքում դիտարկել նրանց՝ սոցիալապես անապահով կամ աղքատ, ինչպես նաև աշխատաշուկայում անմրցունակ լինելու հանգամանքը: Դրանից բացի՝ մասնագիտական ուսուցման դասընթացների ներգրավման նախնական փուլում ընդգրկվելու համար սոցիալապես անապահով կամ աղքատության շեմը չհաղթահարած աշխատանք փնտրող անձինք կօգտվեն մասնագիտական կողմնորոշման խորհրդատվությունից: Հաջորդ կարևոր միջոցառումը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթական և այլ կարիքների գնահատումն ու դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի օպտիմալացումն է, հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերումը և դպրոց վերադարձնելը, մասնագիտական կողմնորոշումն ու կրկնուսույցների տրամադրումն է: Այդ նպատակով մշակվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ, որը գտնվում է շրջանառության մեջ: Այնուհետև նախատեսվում է յուրաքանչյուր տարի իրականացնել սոցիալապես անապահով

ընտանիքների 16-18 տարեկան երեխաների կրթության նկատմամբ հակումների, նախաափրությունների, ունակությունների ու կարողությունների, կրթությունը շարունակելու նպատակամղվածության, կրթության իրականացմանը խոչընդոտող հիմնական խնդիրների հետազոտություն:

ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանն առաջարկեց, որպեսզի սոցիալապես անապահով ընտանիքների 16-18 տարեկան երեխաների կրթության նկատմամբ հակումների, նախաափրությունների, ունակությունների ու կարողությունների, կրթությունը շարունակելու նպատակամղվածության, կրթության իրականացմանը խոչընդոտող հիմնական խնդիրների հետազոտությունների արդյունքների հիման վրա նախնական և միջին մասնագիտական կրթության հաստատություններում կոնկրետ մասնագիտությունների գծով ձևակերպել նպատակային պետական պատվեր (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացվող տարեկան հայտի հիման վրա):

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Հ. Հունանյանը նշեց, որ ՀՀ ոստիկանությունում դժվար դաստիարակվող անչափահաս երեխաների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում վերջիններիս սոցիալական կարգավիճակը: Ուստի և անհասկանալի է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցության մեխանիզմը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանին՝ սոցիալապես անապահով ընտանիքների 16-18 տարեկան երեխաների կրթության նկատմամբ հակումների, նախաափրությունների, ունակությունների ու կարողությունների, կրթությունը շարունակելու նպատակամղվածության, կրթության իրականացմանը խոչընդոտող հիմնական խնդիրների հետազոտությունների կատարման գործընթացում հաշվի առնել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի ներկայացրած առաջարկությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ